

8366

Чемеринка

Красивая птичка  
быв Гурзуф/45 1962 г.

Фотография - 1913

281.6

U-30

03 AUG 2009

203.5  
U-29

04 NOV 2009

ՀԱՄԱՊՈՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

# ՍԻՄՖԵՐՈՎԱԼԻ

ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅԵՐՈՒՆ ՎՐԱՅ



29 JUL 2013

8366

28.6  
U-30 48-

ՀԱՄԱՈՅՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

# ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՈՅ


ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԻՆԻՆ ԱՌԻԹՈՎ.

ԳՐԵՑ

Հ. ՀԱՄԱԶԱՍՊ Գ. ՍԱՓՈՐԵԱՆ

Ա Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն

20742



ԳԵՂԻՑԻ ՍԻԿ - Ա - Պ, Ա, Զ, Ա, Բ

1913



## ՅԻՄՆԱՄԵՍՅ ՅՈԲԵԼԵԱՆ

Հ Յ Ո Յ Կ Ա Ր Ա Վ Ի Կ Ե Կ Ե Վ Ե Ց Խ Ո Յ

Ս Ի Մ Ֆ Ե Ր Ո Պ Ո Լ Ի




ԱՅ ազգն ի բնէ սիրող եղած է ազ-  
գային աւանդութեանց , ազգային ե-  
կեղեցական ծէսերու և արարողու-  
թեանց . միշտ և ամէն տեղ խնամքով  
պահպանած է հայկական սովորութիւն-  
ները , և չ'ուզեր բաժնուիլ այն հնաւանդ տաղերէն և  
տիւրագին երաժշտական եղանակներէն , զոր լսեր  
է թէ՛ ցաւոց և թէ՛ ուրախութեան մէջ , թէ՛ հալած-  
ման և օտարութեան և թէ՛ յաղթանակի հանդէսներու  
ժամերուն : Այնոնց իր հոգւոյն կենսական սնունդն  
են և զանոնց մինչև գերեզման հետը կը տանի : Այն  
մեղեղիներն և հայրենական երգերը՝ նոր կեանք մը  
կը շնչեն , ազգային պարծանք են՝ զորս որդւոց  
որդի կ'աւանդէ ամենայն նախանձայուզութեամբ :


իր այս յայտնի զգացումներով՝ հայ ազգն եղած է միշտ աստուածապաշտ, կրօնասէր և եկեղեցասէր։ Հին ժամանակներէ մինչև հիմայ՝ տաճար, եկեղեցի և աղօթատուն՝ կեղրոն էր և է ազգութեան, կեղրոն նաև մտաւորական զարգացման։ Ուր որ երթար նա, ուր գաղթելու ալ ըլլար կամովին կամ ակամայ, հալածեալ կամ թէ ընկճեալ յաղբատութենէ, նախ հետք պիտի տանէր իր սրբազան անօթները, պատկերները, խաչքարերը, սրբոց մասունքները, աւանդական մատեանները, ձեռագրերը, նոյն իսկ քանդակեալ տաճարի գոները, և ապա առաջին գործը կ'ըլլար կանգնել փայտակերտ կամ բարաշէն աղօթատուն կամ եկեղեցի մը։ Բանանք մեր ազգին պատմութեան էջերը և կը տեսնենք իրականութիւնը, և դիւրաւ կ'ըմբռնենք թէ այս է հայ ազգի իսկական անջնջելի բնադրոշմը։

Տաւրիոյ Հայերը՝ անբախտ Անեցւոց սերունդ են, և այս պարագան բաւական է նախընթաց ըսածնիս հաստատելու։ Ասոնք մի և նոյն հոգւով սնած և մեծցած են, մի և նոյն կրակէ, ջրէ և սրէ անցած, և նուազելով թաթարներու ասպատակութենէ և կոտորածէ, դէպ համայնաջինջ վիճը մօտեցեր են, ուր մի միայն և փոքրիկ նշոյլ մը տակաւին կեանք կուտայ, և այս նշոյլն է հայկական եկեղեցին, հայկական լեզուն, որ եթէ խաւարի՝ անշուշտ իրենք ալ պիտի անհետանան երկրիս երեսէն։ Բայց եղեր են և կան մինչև օրս այնպիսի անձինք, որոնք արծարծ ու լուսաւոր պահեր են և կը պահեն այս նշոյլը. ուստի ազատեր են Տաւրիոյ հայերը՝ հին կորած և մարած ազգերու ունեցած դառն և աղետալի բախտէն։

Այսպիսի նշանաւոր և արդիւնաբեր անձերէն մին եղաւ Արմֆերոպովի հայ կաթողիկէ ժողովրդեան հա-



Առինա Կալվանդեան  
ծ. 1826 † 1862



Արգիս Կալվանդեան  
ծ. 1798 † 1864

մար Ասրգիս Աղա Նալպանդեան, որոյ յիշատակը կը կատարենք իր շինած եկեղեցւոյ յիսնամեայ յուրելինին առթիւ:

Ոիմֆերոպոլի հայ կաթողիկէ ժողովրդեան պատմութիւնը կը սկսի Ասրգիս Աղայի կառուցած եկեղեցիով. բայց բուն ժողովրդեան ծագման և կամանոր զաղթականութեան անցքը՝ մեծ կապակցութիւն ունի այն արտաքոյ կարգի քաղաքականութեան դէպքի հետ, որով յամին 1777, Սուվորով մարաշախտը՝ հրամանաւ Ռուսաց հօր տէրութեան, կը հանէ կը քշէ բոլոր իրիմարնակ Հայերը՝ Յունաց հետ միասին՝ զոմանս ի Նախիջնամ, զոմանս ի Մարիամպոլ, և մերազգիները Տներեր գետին մօտ, ուր կը շինեն Եկատարինոսուլաւ քաղաքը՝ հանդերձ փայտեայ եկեղեցիով։ Հոս կը մնան 13 տարի ցաւոց, ողբոց և օտարութեան մէջ, և ապա ինդիր կու տան Ռուսաց տէրութեան, որ դառնան իրենց հայրենիքը Խարասու և Թէղողոսիա, որոնք արդէն 1783ին առնուած էին բոլորովին Թաթարաց ձեռքէն։ Ասոնք կ'ընդունին հրամանը և թողլով հազարաւոր դիմացին գեղեցիկ և ճոխ արտերը՝ կը դառնան 1790ին իրենց աւերեալ հայրենիքը, առաջնորդութեամբ Տէր Յակոբ Վարդերեսեւիչ կանոնիկոսի։

Ճիշդ այս ժամանակներս կու զան Տաճկաստանէն մեր ազգայիններէն ոմանք, որոց մէջ էր նաև Առաքել Նալպանդ կիւմիշխանացի, որ հալածեալ տաճկական սրէ և բարբարոսութենէ, կ'ապաւինի Թէղողոսիա և ասկից կ'երթայ Խարասու, ուր արդէն հաւաքուած էին իր ազգակիցները ու փայտէ եկեղեցի մը կը շվնէին։

Առաքել արուեստով նալպանդ էր, այսինքն պատար, ուստի ըստ հայ ազգի սովորութեան՝ կոչուեցաւ Նալպանդեան։ Խարասուի մէջ ալ կը շարու-

նակէ իր արուեստը , և քանի մը տարիէն Առաքել կը պսակով Տաւութօղլու և կամ Դաւթեան որբեարի կնկան մը հետ՝ Աննա անունով , որ ունէր իր առաջին էրկանէն երեք որդիք , Յովհաննէս , Դուկաս և Գաբրիէլ : Ավայն Առաքել Նալպանդեան՝ կարճ ժամանակէ ետքը , ընտանեկան անհամաձայնութեան պատճառաւ՝ կը ձգէ իր ընտանիքն և արուեստը և կ'երթայ Պետերբուրգ իւր մօրեղօրը քով , որ պարսկական ապրանքներով վաճառականութիւն կ'ընէր ու մեծ հարստութեան տէր եղեր էր հոն :

Այդ միջոցներուն Առաքելի մօրեղբայրը կը մեռնի և անոր ամբողջ հարստութիւնը կը մնայ Առաքել Նալպանդին : Երբ այս լուրը կը հասնի Խարասու , իր որբեարի կնիկը՝ շուտով իր Յովհաննէս որդին էրկան ետևէն կը զրկէ Պետերբուրգ , ուսկից ամբաւ հարստութեամբ Խարասու կը դառնան , և այն պարզ արուեստաւոր ու խեղճ Առաքել Նալպանդը՝ կ'ըլլայ միլիոնատէր Առաքել Աղա Նալպանդեան :

Այս միջոցներուս , այսինքն 1816 ին , դարձեալ կիւմիշխանայէն կու գայ թէզողոսիա պատանի մը՝ Սարգիս Քէշկէկողլու , որդի Յովհաննու և Մարիամ Դաւթեանի , ծնեալ 1798 ին , և կ'երթայ ուղղակի Խարասու իրեն ազգական հայրենակցին՝ Առաքել Աղա Նալպանդեանի քովը , միայն 20 կոպէկ դրամ ձեռքը մնացած , կընամ ըսել նոյնպէս կեղեցքուած ու փախած տաճկական հալածման դառնութենէն և տառապանքներէն : Առաքել Աղա Նալպանդեան սիրով կ'ընդունի պատանին , կ'օգնէ իրեն և գործ կու տայ , այսինքն սրճարան մը կը բանայ , ուր հաւատարմութեամբ և աշխուժով պատանին կը ծառայէ ամենուն : Յետոյ կը յանձնէ անոր քաղաքական կշխոքի գործը կամ վերակացութիւնը , և այս գործոյն մէջ ալ ցուցընելով իրեն բանիմացութիւնն և ուղղա-

մտութիւնը , շատ սիրելի կ'ըլլայ . Առաքել Աղա Նալպանդիանի . ուստի ուրիշ մեծ գործեր կու տայ իրեն , այսինքն կը զրկէ այլ և այլ տեղեր ցորեն , գարի , վարսակ մողովելու . և որպէս զի աւելի անուն ունենայ և մեծ հաւատարմութիւն վաճառականաց և երկրատերանց առջև , երիտասարդին մականունը կը փոխէ , որով Սարգիս Քէշկէկ-օղլուն կ'ըլլայ Սարգիս Նալպանդեան :

Առաքել աղա Նալպանդեան կը մեռնի 1823 ին , որուն բոլոր գործերը Սարգիս կը ժառանգէ և կը շարունակէ ամենայն գործունէութեամբ և պատուով : Այս ժամանակէս արդէն ունէր նա սեպհական կառքեր , ծիեր և զրամագլուխ , և Խարասու մէջ տաջնակարգ տեղը կը բռնէր թէ՛ քաղաքական և թէ՛ եկեղեցական գործոց մէջ , ուստի իր անունը օրէ օր ամէն տեղ կը տարածուէր :

Այսպիսի անուն ունեցող երիտասարդ մը՝ շատ ընտանիք կը ցանկան փեսայցնել : Սահակ Աղա Շահիպեան կը յաջողի նշանել զինքը իւր Աննա դստեր հետ , որուն պսակի հանդէսը կը կատարէ Հ . Մինաս վ . Բժշկեան յամի 1832 Նոյեմբերի 8 ին , ուսկից կ'ունենայ նախ զուստը մը՝ Ոնաստախա անուամբ , որ շուտով կը մեռնի , և ապա 1836 Մարտի 6 ին կը վախճանի նաև իր ամուսինը ծաղիկ հասակի մէջ :

Այս անբախտութեան պատճառով կը թողու բոլորովին Խարասու և կու գայ կը հաստատուի Միմֆերոպոլ , ուր արդէն սկսեր էր իր առուտուը : Հոս կը շարունակէ իր ցորենի , բուրդի և կանեփի գործը , զոր Առաքել Աղա Նալպանդեանէն ժառանգեր էր . և ասկից ստէպ երթևեկելով Եւփաթորիա , Անսաստապոլ և Թէզողոսիա , նաւերով ցորեն , գարի , և այլն , կը փոխադրէր Տաճկաստանի այլ և այլ կող-

մեր։ Բաց ասկից՝ ամէն տեսակ ապրանք կը բերէր անձամք և կամ բերել կու տար Պոլտաւայէն, Նիժնիէն, կախովքայէն և Պերտիչեւէն։ Այսպէս շարունակելով իւր գործերը՝ կը յաջողի մեծ տուն մը գնել ցաղցին կեղրոն տեղը, զոր վայելուշ կը կահաւորէ, և ապա հետզհետէ կ'աւելցնէ ուրիշ անշարժ կայքեր։

Խարասու ստէպ երթեւեկութեան ժամանակը՝ Սահակ Աղա Շահիպեան կը յորդորէ զինքը որ պսակուի երկրորդ անգամ ու կ'առաջարկէ Սոփիա օրիորդը, գուստը Միքայէլ և Մարիամ Զամչեանի, որոնք փախչելով կիւմիշխանայէն՝ եկեր էին նախ թէողոսիա, և ապա քիչ ժամանակէն երթալով Դարախիթաշ իրենց ծանօթ Արմոն և Շուշան Քարաքաշեանի մօտ մնացեր ին, և յետոյ Խարասու գալով՝ կը բնակէին Սահակ Աղա Շահիպեանի տունը։ Սարգիս Նալպանդեան իր աներոջ կամքը կը կատարէ, ինչպէս նաև իր քրոջ Շուշան Քարաքաշեանի։ Կը նշանուի Սոփիա Զամչեանի հետ, և որովհետեւ գեռ 14–15 տարեկան էր Սոփիա, կը զրկէ զինքը Բաղչէլի գիւղի մօտ՝ ոռւս ազնուական ընտանեաց մը մէջ՝ ոռւսերէն սովլիելու համար, ուր կը մնայ Սոփիա մօտ երկու տարի, և յետոյ 1839 ին Օգոստոսի 31 ին կը պսակուի Խարասուի մէջ, և ապա կու գան Սիմֆերոպոլ իրենց սեպհական տունը։

Այս միջոցին, այսինքն 1841 ին, արդէն Եւփատորիոյ առաջին կարգի վաճառականն էր Սարգիս Նալպանդեան, որուն գործերն այնչափ ընդարձակ էին՝ որ անձամք չէր բաւեր կատարելու. ուստի թէ՝ իր օգտին համար և թէ հայ ժողովրդեան աղէկութիւն բնելու դիտմամբ՝ կը հրաւիրէ Խարասուէն ազգային երիտասարդներ և գործակատար անձերէ շատեր, և կու տայ անոնց դրամ, գործ, բնակարան

և ուտելիք. ոմանց համար իւանութներ կը բանայ, ուրիշներ կը զրկէ Եւփատորիա և Սեւաստոպոլ՝ քաղաքական կշիռքի վերակացութեամբ, կը յորդորէ որ աշխատին հաւատարմութեամբ, գործեն վաստակին և իրենց ընտանիքը պահէն։ Իրբև հայր և առաջնորդ՝ կը խնամէր ամէնքը. իր տան դռները բաց էին. ուրախութիւն, հանդէսներ անպակաս էին. իր ամուսինը Սոփիա ձեռնտու և օգնական էր իրեն ամէն բանի մէջ։ Երբ առեսրական տարին կը լրանար՝ կը կանչէր ամէն իր գործակատարներն և ընկերները, հաշիւ կը պահանջէր. վաստակէն ամենուն պատկանածը տալէն վերջը՝ մաս մ'ալ մէկդի կը գնէր բարի նպատակի մը համար, այսինքն՝ եկեղեցի և վարժատուն շինելու նպատակաւ։

Սարգիս Նալպանդեան այս յաջողութեան և հարըստութեան հետ՝ կ'ունենայ տասնեակ տարիներու մէջ նաև իրեն ժառանգները. երեք մանչ զաւակ և երեք աղջիկ, Յովհաննէս և Մկրտիչ երկուորեակը և Սարգիս, Մարիամ, Աննա և Աննաստասիա։

1850 ի ատենները Արմֆերոպոլի մէջ 20 էն աւելի հայ կաթողիկէ ընտանիք չկային, բայց օրէ օր կ'աւելնար անոնց թիւը Խարասուէն գաղթողներու պատճառաւ։ Ասոնց չունէին ոչ եկեղեցի, ոչ քահանայ և ոչ վարժատուն. ուստի Լատինաց եկեղեցին կը յաճախէին և լատին քահանային ծուխը կը համարուէին. բայց հայազգիներէն նաև երէցփոխան ալ ընտրուեր է, ինչպէս Պ. Կարապետ Ծիկոյեան. բայց ամենաին հայկական ժամերգութիւն, ծայնաւոր պատարագ և ուրիշ եկեղեցական հանդէսներ չէին կատարուեր։ Սարգիս Աղա Նալպանդեան տեսնելով ժողովրդեան խեղճութիւնը, իր տան մէջ յատկացուց սենեակ մը՝ աղօթատան համար, ուր երբեմն երբեմն չ. Վլթանէս վ. Պուտուրեան՝ Խարասուէն

կու գալ՝ պատարագ կը մատուցանէք, եկեղեցական  
հանդէսներ կը կատարէք, մինչև անզամ աւագ ուր-  
բաթու խաւարումը, և այսպէս կը միսիթարէք ժու-  
ղովուրդը:

Բայց կարելի չէր այս կերպով առաջ երթալ, մանաւանդ որ հետզհետէ ժողովուրդը կը շատնար, և շատ անգամ հակաճառութիւններ կ' ունենային լատին քահանային և ժողովրդեան հետ, և երկու կողմանէ կը լսուէին տրտունջներ և տժգոհութիւններ։ Ասոնց դէմ առնելու համար՝ Արագիս Աղա Նալպանզեան կը շտապէ իր գիտաւորութիւնը իրականացնելու շուտով, բանի որ ժողովրդեան մէջ պալութիւն չէր մտած և արծարծ պահելու ազգութեան սէրը։

Արդէն բաղաքին մէջ մեծ համբաւ ունէր նա թէ  
հարստութեամբ և թէ պատուով, տէրութեան ամէն  
պաշտօնէից հետ ծանօթ և բարեկամ, բաղաքական  
ամէն հաստատութեանց գռները բաց էին իրեն առաջ,  
Նահանգապետի և ուրիշ մեծամեծաց հետ ընտանի  
և բարեկամ, (թէպէտ և ոռուերէն լաւ չէր խօսեր  
և միայն իր անունը ստորագրել զիտէր), ուստի որ  
և իցէ խնդրու յաջողութիւնը ապահով էր:

1850 Յունիսի 22-ին կը գնէ ընդարձակ պարագ տեղ մը՝ մէկ երկու փոքր և խեղճուկ շէնքերով քաղաքէն զուրս, և կու տայ 2000 սուբլի, զոր կը յատկացնէ եկեղեցւոյ և վարժաւան համար։ Աիծ ֆեռոպոլի հայ կաթողիկէ ժողովուրդը իմանալով Սարգիս Աղա Նալպանդեանի դիտաւորութիւնը, կը հակառակի և չ'ուզեր քաղաքէն զուրս հեռու ունեալ ազգային եկեղեցին, մինչեւ իսկ կը բողոքէ ասոր վրայ Նահանգապետին, բայց հեռատես և խելացի մարդք՝ կը պնդէ և ամենեւին ուշ չի դարձներ ժողովրդեան բողոքներուն և կը շարունակէ իր գոր-

Ծը: 1851 ին շինել կու տայ եկեղեցւոյ յատակագիծ  
մը՝ զոր յամի 1852 Մարտի 4 ին կը ներկայացնէ  
խնդրագրով՝ Ախտերոպոլի Նահանգապետին, խնդրե-  
լով որ հաստատէ զայն՝ առանց փոփոխելու, և թոյլ  
տայ շինելու այժմեան Դւորեանսակի փողոցի վրայ՝  
յատուկ անոր համար առնուած տեղը: Նահանգա-  
պետը կը զրկէ այն ծրագիրը և խնդիրը Ախմֆերո-  
պոլի Հասարակաց շինութեան և ճանապարհաց եր-  
թեեկութեան զԼիսաւոր վարչութեան՝ որ քննէ զայն:  
Աս քննելով յատակագիծը՝ երեք կէտերու մէջ ան-  
յարմար կը գտնէ և զանոնք նշանակելով՝ կը զրկէ  
Յուլիսի 21 ին Պետերբուրգի ճարտարապետութեան  
տեսչութեան: Հոս Օգոստոսի 3 ին նոյնպէս անյար-  
մար կը գտնեն եկեղեցւոյ ճակատը և ներքին բա-  
ժանմունքը, և սրբագրելով՝ կը հաստատեն 20 Նո-  
յեմբերի 1852 ի և կ'ուղարկեն Ախմֆերոպոլ՝ գեռ  
ուրիշ ձևակերպութեանց համար:

L 500

Յաջորդ տարին Աեւաստապոլի պատերազմը արշակունյաց կ'ըլլայ ամէն գործի. տէրութեան մարդիկ ըշաբած էին իրենց կարևոր գործերով, ժողովուրդը խոռված և ահօռդողի մէջ, առևտուրը դադրած, շատերը քաղաքէն կամ կը փախչէին և կամ կը գաղթէին այլ և այլ հեռու տեղեր. ազգայինը Խարասու կ'երթան, ինչպէս նաև Արգիս Աղա Նալպանշգեանի ընտանիքը: Խակ ինըը մնեծ աշխուժութեամբ իր գործերը կը շարունակէր, աւելցնելով տէրութեան կապալները՝ մասնաւորապէս փայտի, ածուխի և խոտի, որոնց զիները նախ շատ ցած էին, բայց ապա շատ թանկանալով՝ չկարողացաւ տէրութեան կապալները լրացնել, մասնաւորապէս թաթարներու անհաւատարմութեան պատճառաւ, որոնք պատերազմի վախէն չէին ուզեր ապրանքները կրել սայլերով, և շատ անգամ կէս ճամբու մէջ կը թողովին թնդա-



նօթի ձայներու վախէն։ Այսպիսի գժուարին պայմաններու մէջ զտնուելով՝ չէր զիտեր ի՞նչ ընել, մանաւանդ երբ Մէնշիկով հրամանատարն սպառնաց մահապարտ ընել զինքը, բոլորովին այլայլեցաւ և հիւանդութիւն եկաւ վրան, ուստի երկար ժամանակ տնէն դուրս չէր ելլեր։

Սարգիս Աղա Նալպանդեանի հիւանդութիւնը շարունակեց մինչև 1856. և երբ սկսաւ ինքզինը ըիչ մը լու զգալ, դարձեալ սկսաւ իր գործերը, ինչպէս նաև եկեղեցւոյն կառուցումը։ Առանց դանդաղելու նախ Նահանգապետին ինդիր կու տայ, և սա կը զբէ Քերանի ոռուսական հոգեոր կոնսիստորիայի, ու կը հարցնէ թէ արդեօք արգելք մը կայ իրեն կողմանէ Հայ-կաթողիկէ եկեղեցւոյ շինութեան՝ Դուրեանսկի փողոցի վրայ։ Այս ի սկզբան արգելք կը հանէ՝ սպատճառելով թէ Ռուսաց Պետրոս-Պողոսի շինուելիք եկեղեցւոյն մօտ ըլլալուն համար՝ կարելի չէ։ Բայց երբ կը տեղեկացնեն թէ Դուրեանսկի փողոցը Ռուսաց շինուելիք եկեղեցին շատ հեռու է, այն ժամանակ ոռուսական հոգեոր կոնսիստորիան կը զբէ Խարասու Հ. Վրթանէս վ., Պուտուրեանի 1856 Յուլիսի 28ին, և հրաման կու տայ եկեղեցին շինուելու։ Ճիշդ այս ժամանակս հանդիսաւոր կերպով կը հաստատեն և կ'օրհնեն հիմք։

Ասկէց վերջը, մինչզեռ Սարգիս Աղա Նալպանդեան իր գժուարին գործերով զբազած էր տէրութեան հետ, կը մտածէ ու կը խնդրէ Հ. Վրթանէս վ. Պուտուրեանէն որ Ախմֆերսովի Հայ-կաթիղիկէ ժողովրդեան համար քահանայ մը զրկէ։ Այս կը զրկէ Հ. Սիմոն վ. Ճուլարտեան՝ վենետիկոյ Միիթարեան Միաբանութենէն, և միանգամայն ինդիր կու տայ Սարատովի Քան եպիսկոպոսին՝ հաստատութեան համար։ Այդ հաստատութեան զիրը կու



Հ. Սիմոն վ. Ճուլարտեան

1861 – 1879

գայ 1856 Դեկտեմբերի 31ին՝ պայմանով՝ որ Հ. Սիմոն Ճուղարտեանը պիտի ըլլայ «իբրև օգնական՝ լատին եկեղեցւոյ քահանային, բայց հայ կաթողիկէ ժողովրդեան համար, և երկրորդ՝ հայ կաթողիկէ ժողովրդենէն եկած եկամուտը պիտի տրուի լատին քահանային», այս բանիս համար ժողովրդենէն ստորագրութիւն կը պահանջուի և կը տրուի:

Հ. Սիմոն Վ. Ճուղարտեան երթալով ի Սիմֆերովունախ կը բնակի Սարգիս Աղա Նալպանդեանի տունը, պատարազը կը մատուցանէ լատին եկեղեցւոյ մէջ. յետոյ կ'անցնի եկեղեցւոյ քակին մէջ կառուցուած փոքր տունը ու կը սկսի աշխատիլ եկեղեցւոյ շինութեան իննդրոյն համար։ Թէպէտե հիմը դրուած էր՝ բայց քաղաքական ոստիկանութիւնը հըրաման չէր տար շարունակելու. վասն զի բուն յատակագիծը դարձեալ դրկուեր էր Պետերբուրգ,

Շատ կը նեղուին թէ՛ ժողովուրդը և թէ՛ Սարգիս Աղա Նալպանդեան։ Քար, կիր, փայտ պատրաստ էին և կարող չէին շինել ու պատերը բարձրացնե՛։ Վերջապէս յետ բազմաթիւ աղերսազրերու՝ հրաման կու տան. բայց նախ Սարգիս Աղա Նալպանդեանէն ստորագրութիւն կը պահանջեն՝ Ներքին գործոց նախարարութենէ, որ ինըն առանց որ և է արգելքի եկեղեցին պիտի շինէ ամբողջապէս ու ապահովցնէ նաև ապագայ եկեղեցականաց ծախը։ Ահա այս հետեւալ ստորագրութիւնս կու տայ Սարգիս Աղա Նալպանդեան։

« Յամի 1858 Յունուարի 10ին ես ի ներքոյ ստորագրեալս՝ ժառանգական պատուաւոր քաղաքացի և Եւփատորիոյ առաջին կարգի վաճառական, Սարգիս Նալպանդով կու տամ այս ստորագրութիւնս Սիմֆերոպոլի քաղաքական Ոստիկանութեան ըստ հրամանագրի վարչութեան Տաւրիական նահանգին,

որ ի 14 անցեալ Դեկտեմբերի ընդ համարաւ 8425, թէ Սիմֆերոպոլի հայ կաթողիկէ եկեղեցւոյ կառուցումն շատոնց ապահոված եմ, թէ դրամագլխով և թէ իմ անշարժ կայքովս, որ Սիմֆէրոպոլի գաւառի մէջ եղած Արաթուք գիւղի մօտ է. բաց ասկից՝ արդէն պատրաստած եմ պէտք եղած եկեղեցւոյ շինութեան ամէն նիւթերը, կառուցած եմ առ ժամանակեայ տուն մը եկեղեցւոյ պաշտօնէից համար, ապահոված եմ անոնց ոռնիկը, և եթէ մահս պատահի եկեղեցին լմացնելէն առաջ, սա ամենեին արգելք մը չ'ըլլար։ Կը ստորագրեմ Սարգիս Նալպանդով»։

Այս ստորագրութիւնս կը զրկուի Պետերբուրգ Ներքին գործոց Նախարարին, և կու զայ յատակագիծը հաստատուած 1859 Ապրիլի 25ին։ Իսկայն ձեռք կը զարնեն շէնքին, և եկեղեցւոյ պատերը կը բարձրանան։

Սարգիս Աղա Նալպանդեան շարունակելով իր գործը, կը մոածէ նաև վարժատան համար, և նախ խնդիր կու տայ Քան եպիսկոպոսին որ Հ. Սիմոն վ. Ճուղարտեանը հաստատէ իրը ժողովրդապետ Սիմֆերոպոլի հայ կաթողիկէ ժողովրդեան՝ 400 ոռւրի ոռնիկով, որուն 200 ոռւրի ինքը պիտի տայ ամէն տարի Արաթուք գիւղի եկամտէն, և 200 ոռւրին՝ Սիմֆերոպոլի հայ կաթողիկէ ժողովրդեան պիտի հաւաքուէր ամէն տարի. իսկ վարժապետի և ծառայից համար պիտի տար ինքը վերոյիշեալ գիւղի եկամտէն 300 ոռւրի մշտնջենապէս։ Հաստատութիւնը կու զայ Հ. Սիմոն վ. Ճուղարտեանի 1861 Նոյեմբերի 13ին։

Մինչդեռ այսպէս Եկեղեցւոյ գործերը ամենայն յաջողութեամբ առաջ կ'երթար ու գոհ սրտով կը հսկէր գործին Սարգիս Աղա Նալպանդեան, յան-



Եկեղեցի Արմաֆեռոպոլի

կարծ իր գերդաստանին մէջ դժբախտութիւն կը պատահի, Առփիսա՝ իր աջ բազուկը ամէն գործերու մէջ, կը հիւանդանայ և քիչ ժամանակէն կը վախճանի ծաղիկ հասակի մէջ 1862 փետրուարի 1ին, որ խոր անտանելի ցաւոց և դառնութեան մէջ կը ձգէ զինքը, իւր զաւակները և բոլոր ազգականները։ Եկեղեցւոյ բակին մէջ պատրաստել կու տայ դամբարանը իր ամուսնոյն համար. բայց նահանգապետը հրաման չի տար հոն թաղելու. ուստի կը ստիպովին առժամանակեայ Ուուսաց հին գերեզմանը թաղելու մեծահանդէս զինուորական երաժշտութեամբ, և կ'աշխատին միանգամայն Պիտերբուրգ՝ այլ և այլ անձանց միջոցաւ հրաման առնուլ և փոխադրել եկեղեցւոյ բակը։ Երեք շաբաթէն հրամանը կու գայ Նախարարէն, ուստի կը փոխադրեն մարմինը նոր շինուած դամբանին մէջ։

Այսպիսի մահացու հարուածէն Սարգիս Աղան կը հիւանդանայ, իր գործերը և դատերը ետ կը մնան, ինչպէս նաև եկեղեցւոյ շէնքը կ'ուշանայ։ Այս ժամանակս իր որդին Սարգիս զիմանցիոնէն դուրս կ'ելլէ հագիւ 18 տարեկան, և կը սկսի աշխատիլ՝ կարգի դնելու գործերը իր հօրը փաստաբանին օգնականութեամբ։ — Իսկ Հ. Սիմոն Վ. Ճուլարտեան հաստատուելով իբրև ժողովրդապետ, խնդիր կու տայ Սիմֆոնիովով ժողովրդական դպրոցներու Տեսչին, և հրաման կ'ուզէ ծխական դպրոց մը բանալու եկեղեցւոյ բակին մէջ։ հրամանը կ'ընդունի Տեսչին՝ 1862 Մայիսի 23ին. և նոյն տարւոյն համար աշակերտ կ'ունենայ 13 հոգի։

Սարգիս Աղա Նախանդեանի հիւանդութեան պատճառով՝ եկեղեցւոյ շինութիւնը կը դանդաղի։ Ժողովուրդը կը սկսի տրտունջներ յայտնել։ Հ. Սիմոն վարդապետն ալ լեհ ժողովրդապետէն նեղութիւն կը

կրէ, որով կը ստիպուի զրել Քան եպիսկոպոսին՝ տեղեկացնելով ամէն հանգամանքը, ու կը խնդրէ որ հրաման տայ եկեղեցւոյն յատակը փոխանակ մարմարինէ շինելու՝ առժամս փայտէ շինեն, որպէս զի կարենայ հոն շուտով եկեղեցական պաշտօնները կատարել, որով ժողովուրդն ալ ազատի լատին ժողովրդապետին տուած նեղութենէն:

Քան եպիսկոպոսէն պատասխան կու գայ թէ «Շատ կը ցաւիմ որ եկեղեցւոյ շէնքը կ'ուշանայ, և այս տարւոյ մէջ պիտի չաւարտի. իսկ մարմարինէ յատակին տեղ՝ տախտակէ շինելու ամենեին համաձայն չեմ: Իսկ ինչ որ Միխալսկի ժողովրդապետին կը վերաբերի, աւագ քահանայ մը կու գայ և կը նայի»:

1862 Դեկտեմբերի մէջ զրեթէ կ'աւարտի եկեղեցւոյ շէնքը. և 1863 Յունուարի մէջ ամէն բան կարգի բերելէն վերջը, փետրուարի 2 ին մեծ հանդիսով կ'օրհնեն Գերյարգելի Հ. Վրթանէս վ. Պուտուրեան Միխարեանց տեղական Արքայն, Հ. Յովուսի վ. Կարամուրզա՝ Տաւրիոյ Թերակղւոյն աւագ քահանայն, Հ. Արմոն վ. Ճուլարտեան՝ Արմֆերուպուի հայ-կաթողիկէից ժողովրդապետը և Միխալսկի լատին եկեղեցւոյ ժողովրդապետը: Ներկայ էին բոլոր Արմֆերուպուի հայ կաթողիկէ ժողովուրդը, եկեր էին շատեր Խարասուէն, Եւփատորիայէն և Թէոդոսիայէն. Կային նաև հրապիրեալներ Ուուսաց պաշտօնեաներէն և օտար ազգերէ: Օրհնութենէն վերջը՝ քահանայը և ժողովրդեան մեծագոյն մասն և հրապիրեալները կ'երթան Արքիս Աղա Նալպանդեանի տունը՝ շնորհակալութիւն և ուրախակցութիւն յայտնելու իր մեծ գործին յաջողութեան համար: Իսկ ինքը բոլոր իւր զաւակաց և ժողովրդեան առջև իրը պատասխան չնորհաւորութեանց և շնորհակալութեանց՝ կ'ըսէ. «Արմֆերուպուի հայ կաթողիկէ ժողովրդեանն է շինած

եկեղեցիս, և մենք ալ անոր ժողովուրդն ենք. փառաւորենք զԱստուած ազգային փառաւոր հանդէսներով և չմոռնանք հայ լեզուն»:

Երբ եկեղեցին իր պատշաճ ձևն առաւ և ինչ որ պակաս էր լրացաւ, ժողովրդապետն Ապրիլի 23 ին տեղեկութիւն կու տայ Քան եպիսկոպոսին եկեղեցւոյ օրհնութեան վրայ, և կ'ուզէ մատեաններ յանուն Ա. Փրկիչ եկեղեցւոյ. կ'իմացնէ թէ իր ծուփս կը բաղկանայ 152 էրիկ մարդէ և 130 կնիկ մարդէ: Օգոստոսի 16 ին ալ տեղեկութիւն կու տայ Կոնսիստորիա թէ «Նալպանդեանի եկեղեցին ներքուստ աւարտած է, և աշտաքուստ կը մնայ ծեփել, որ պիտի սկսի յաջորդ տարին 1864 ին: Աակայն այս կը մնայ ցարդ անգործադրելի, թէսէտ և կիրը պատրաստ էր և կայ ցայժմ պահուած»:

Եկեղեցւոյ օրհնութեան ժամանակը՝ ամենահայելուր սպասներն և զգեստները, սկիհ, մասնատուփ, աշտանակներ, կանթեղներ, ջահեր, պատկերներ, և այլն, պատրաստեր էր Հ. Սիմոն Վարդապետ՝ օգնականութեամբ Արքիս Աղայի, երէցփոխանաց և բոլոր Արմֆերուպուի հայ կաթողիկէ ժողովրդեան:

Եւ նախ Արքիս Աղան կ'ընծայէ արծաթէ սկիհ մը, ձեռքի խաչ մը, արծաթէ բուրվառ մը, ջահ մը, երկու փառաւոր շուրջառներ, չորս աշտանակներ և 10 հատ տիրացովի շապիկներ, և այլն: — Կարապետ Միկոյեան կ'ընծայէ արծաթէ կանթեղ մը՝ աւագ խորանին առջեր կախուելու և արծաթէ բաժկամաններ: Յովակիմ Զրախեան կ'ընծայէ 4 հատ զանգակներ. Խաչերես Զրախեան կ'ընծայէ Յիսուս Փրկիչ և Ա. Լուսաւորչայ պատկերները՝ հանդերձ իրենց շրջանակներով: Ղազարոս Լաշինեան կ'ընծայէ Ա. Աստուածածնայ խորանի պատկերը: Գէորգ Զրախեան կ'ընծայէ խաչվառները և այլ և

այլ սրբոց պատկերները։ Յովշաննէս ծիլոյեան և իր եղբայրը Գարբիէ՝ կ'ընծայեն երկու փառաւոր ջահեր՝ վենետիկէն բերուած։ Լազար Աերեպրակով կ'ընծայէ արծաթէ սկիհ մը, կարմիր տանձ-խնձոր շուրջառը իր շապիկներով։

Ներսէս Ներսէսեան կ'ընծայէ արծաթէ հաւկթածն սրբոց մասունքը, մեծ խաչ մը և խնկաման մը։ Սոփիա՝ Սարգիս Աղայի ամուսինը՝ մահուանէն առաջ կ'ընծայէ արծաթէ գեղեցիկ ճաճանչածն եօթն խոյի պատկերը։ Խոտրջուրցի հացազործները կ'ընծայեն եկեղեցւոյ բոլոր նստարաններն և արմոնիումի կէս զինը։ Խոկ Սիմֆերոպոլի հայ կաթողիկէ կանայք՝ շիներ են եկեղեցւոյ ամբողջ լաթեղէնները, զողնոցները, ծածկոցները, բարձերը և ուրիշ կարեոր բաներ, կարճ ըսելով՝ ամէնն ալ իրենց կարողութեան համեմատ ընծայեր են ու զարդարեր Սատուծոյ տունը։

Եկեղեցւոյ շինութեան ամբողջ ծախը եղեր է 50 հազար սուրբի, զոր տուեր է բովանդակ Սարգիս Աղա Նալպանդեան։ Կատարելով սա իր փափաքն և դիտաւորութիւնը, միանգամայն տեսնելով որ Սիմֆերոպոլի հայ կաթողիկէ ժողովուրդը ազատեցաւ նեղութենէ և ձեւացաւ յատուկ հասարակութիւնն մը, ուրախ էր և զոհ։ Սակայն այս ուրախութիւնն երկայն չտեսեց. իւր հիւանդութիւնն առաջ կ'երթար. ընտանիքը խոռված էին, և քահանայք եկեղեցւոյ մեծ բարերարին կեանքին վտանգը տեսնելով՝ այլայլած էին. Խորին տիրութիւն մը կը տարածուէր ամենուն վրայ, և այս աղէտն իրականացաւ՝ երբ լսուեցաւ թէ Սարգիս Աղա Նալպանդեան վախճաններ էր։

1864 Մայիսի 1ին Խրիմի բոլոր վենետիկոյ Միիթարեան վարժապետը կը ժողովին Սիմֆերո-

պոլ՝ Սարգիս Աղա Նալպանդեանի տունը, ոչ թէ ուշրախութեան հանդիսի համար, այլ տիսուր յուղարկաւորութեան վերջին պատիւը տալու այն մարդուն՝ որ զիացած էր իր ազգը և եկեղեցին պատուել, որ կարողացաւ իր բանիմաց և հեռատես մտքով զարգացնել Սիմֆերոպոլի հայ կաթողիկէ ժողովուրդը և պատկառելի ընել օտար ազգաց առջև, Սարգիս Աղայի զաւակներն և Սիմֆերոպոլի հայ կաթողիկէ ժողովուրդը հրաման կ'ուզեն հեռագրով Ներքին գործոց Նախարարէն՝ որ եկեղեցւոյ բակին մէջ թաղուի եկեղեցւոյն հիմնազիրն և բարերարը. շուտով հրամանը կու գայ Պետերբուրգէն թաղերու իր ամուսնոյն քով՝ իր շինած զամբանին մէջ։ Մայիսի 3ին կը կատարուի յուղարկաւորութեան տիսուր հանդէսը ամենայն ճոխութեամբ և պատուվ. զրեթէ բոլոր ժողովուրդը ներկայ էր, որոնք յայտնի կը ցուցնէին իրենց սրաի ցաւն ու կսկիծը։ Կ'իջնէ գերեզմանը Սարգիս Աղա Նալպանդեան՝ թողով ժառանգութիւն Սիմֆերոպոլի հայ կաթողիկէ ժողովը բարեկառոյց եկեղեցին՝ հանդերձ ընդարձակ բակով և շնչըով, խոկ իւր զաւակներուն կը թողու շատ մեծ կայքեր և անմահ անուն մը։

Պակսելով ժողովրդեան ազգապետը, պակսելով ժողովուրդը միացընող զլուխը, կը պակսին նաև եկեղեցւոյն եկամուտները, ուստի դժուարութեամբ կը կառավարուի թէ եկեղեցին և թէ վարժատունը։ Սարգիս Աղայի ժառանգները՝ չգտնելով կտակ մը և ոչ որ և իցէ զրաւոր թուղթ մը՝ իրենց հօրը մահուանէն ետքը չեն ճանչնար և չեն ընդունիր ինչ որ բերանացի խոստացեր էր եկեղեցւոյ բարերարը, և կը մերժեն Հ. Սիմոն Վ. Ճուլարտեանի և երէցիոխանաց պահանջը Արաթուք զիւղի եկամտէն 500 սուրբին։ Երէցիոխանները կը ստիպուին գործը դա-

տաստանի տալու. իրաւունքը եկեղեցւոյ կը տրուի և վճիռը կ'ելլէ որ Նալպանդեան ժառանգներն հասուցանեն այն գումարը: Բայց անոնք կը բողոքեն Սևատին և գործը կ'երկարի: Այսպիսի դիրքի մէջ չ. Սիմոն Վ. Ճուլարտեան կը նեղուի և 400 սուբի ոռնիկը չ'ընդունիր: Դա կը պահանջէ ժողովը դենէն, բայց չի տրուիր. ուստի քահանային և ժողովրդեան մէջ անհամաձայնութիւն կը մտնէ և երկու կողմէն տհաճութիւններ: Ժողովրդեան մէկ մասը խնդիր կու տայ թեմական եպիսկոպոսին՝ որ չ. Սիմոն Վ. Ճուլարտեանի տեղը ուրիշ քահանայ մը նշանակէ: Եպիսկոպոսն ասոր վրայ կ'առաջարկէ չ. Սիմոն վարդապետին՝ Լամենից-Պոդոլսկիի հայ կաթողիկէ եկեղեցւոյ ժողովրդապետութիւնը: Հ. Սիմոն վարդապետը պատճառելով իր ծերութիւնը և հրանդութիւնը կը հրաժարի նոր առաջարկուած պաշտօնէն: Եւ իրապէս կը հրանդանայ չ. Սիմոն վարդապետ և հրաման կը խնդրէ երթալ իր տկարութիւնը դարմանելու իրեն հայրենիքը Ախալցիիէ, և միանգամայն հանգանակութիւն ընել եկեղեցւոյն համար, արձակուրդը կ'ընդունուի, բայց հանգանակութեան խնդիրը կը մերժուի:

1867ին արձակուրդէն ետ զառնալով, կը համաձայնի ժողովրդեան և երէցփոխանաց հետ, և կը շարունակէ Նալպանդեանի ժառանգներուն դէմ սկըսուած դատը: Սիմֆերոպոլի նահանգական վարչութիւնը 1867 Ապրիլի 10ին, 2703 համարով, կ'իմացնէ եկեղեցւոյ երէցփոխաններուն և ժողովրդապետին, որ Նալպանդեան ժառանգները պէտք է տան Արաթուքի եկամտէն 500 սուբի: 1868ին Նալպանդեան երեք աղջիկները խնդիր կու տան տէրութեան, ու կը հաստատեն եկեղեցւոյ պահանջը՝ հրաժարելով իրենց պատկանածէն իրեւ ժառանգներ:

Սակայն Նալպանդեան երեք եղբայրները շարունակելով դատը մինչև 1871, կը կորսընցնեն, և վճիռ կ'ելլէ որ պէտք է հատուցանեն, եկեղեցւոյ 3500 սուբի: Զի վճարուիր այս դրամը, վասն զի Արաթուքի կայքը գրաւի էր, և կը ծախուի աճուրդով ու կը մնայ պարտատիրոջը սեփականութիւն:

1870 Յունուարի 28ին կը վախճանի չ. Յովսէփ Վ. Կարամուրզայ, Աւագ քահանայ Տաւրիոյ, որուն տեղ՝ Լիմիսկի եպիսկոպոսն Մարտի 6ին կը նշանակէ զէջ. Սիմոն Վ. Ճուլարտեան. բայց սա կը հրաժարի թէկողուիայէն ու կը խնդրէ որ զինքը թողու Սիմֆերոպոլի: Օգոստոսի 20ին եպիսկոպոսը կը պատասխանէ չ. Սիմոն վարդապետին և կը թողուիր նախկին պաշտօնին մէջ, նշանակելով թէկողուոյ համար չ. Քերովը Վ. Քուշներեանը:

1872 ին Նալպանդեան երեք եղբայրները դարձեալ կը բողոքեն տէրութեան ժողովրդապետին և երեցփոխանաց դէմ, ու կը պահանջնեն եկեղեցւոյ դատարկ մնացած գետինը՝ հանդերձ մէջի շէնքերով՝ բաց ի եկեղեցիէն, որպէս զի հատուցանեն եկեղեցւոյ պահանջը: 1873 ին չ. Սիմոն Վ. կը յանձնէ գործը Սիմֆերով փաստաբանին, սակայն քիչ ժամանակէն Նալպանդեան երեք եղբայրները ետ կ'առնուն իրենց բողոքն և կը հաշտուին. որով բոլորովին կը վերջանայ անհաճոյ խնդիրը:

Երբ եկեղեցւոյ բակը բոլորովին ապահովցաւ, չ. Սիմոն Վ. աւելի մեծ խնամք ցոյց տուաւ, գեղեցիկ պարտէզ մը շինելով և գեղեցիկ ծաղիկներ և պըտպատու ծառեր տնկելով:

Այս ժամանակներս սովորութիւն կար Դւորեանսկի փողոցի երկու կողմը և եկեղեցւոյն առջել վաճառանոց ընել՝ կիրակի և տօն օրերը. ուստի մեծ աղմուկներ, կոխւներ ու անվայել տեսարաններ կ'ըլ-

լային։ Այս պատճառով Հ. Սիմոն վ. խնդիր կու տայ և կը բողոքէ այս ամէն անկարգութեանց դէմ քաղաքային վարչութեան, ինչպէս եաւ նահանգական մաքսային տեսչութեան, ու խափանել կու տայ։

Հ. Սիմոն վ. 1879 Ապրիլի 13ին տեսնելով որ օրէ օր կը տկարանայ և ծերութիւնը կը տիրէ, խնդիր կու տայ թեմական եպիսկոպոսին ու կ'ուզէ չորս ամսուան համար արձակուրդ, որ երթայ արտասահման իր առողջութիւնը դարձանելու։ Կ'ընդունի հրամանը, վերջին բարել կու տայ ժողովրդեան ու կը մեկնի նախ Ախալցիխէ, ապա վենետիկ, ուր հիւանդութեան և ծերութեան պատճառով կը մնայ, և երկու տարիէն կը վախճանի։

Հ. Սիմոն վ. Ճուկարտեանի արդիւնքն և աշխատանքը շատ մեծ է թէ՛ Սիմֆերոպոլի հայ կաթողիկէ ժողովրդեան, թէ՛ եկեղեցւոյն շէնքի և թէ՛ եկեղեցական զարդերու և սպասուց վրայ, ինչպէս նաև իրեն գրած և շինած Խարասուի, Սիմֆերոպոլի և Եւփատորիոյ ժողովրդեան ցուցակի մատեաններով՝ մեծ ծառայութիւն մատուցած է խրիմարնակ հայ կաթողիկէ ժողովրդեան պատմութեան։ Իրեն ժամանակը շատ պարզ էր երգեցողութիւնը, որուն կ'օգնէին և սիրով կը մասնակցէին ձայնաւոր պատարագներու և ժամերգութեանց Յովհաննէս Աղա Ծիկոյեան, Ստեփան Քարայեան, Առաքել Նալպանդեան, Յովսէփ Ծիկոյեան և Մկրտիչ Ծիկոյեան։ Վերջինս շարունակեց մասնակցիլ նաև երաժշտական խմբի մէջ մինչև 1899։ Հ. Սիմոն վ. Ճուկարտեանը մեկնելով Սիմֆերոպոլէն կը թողու իր տեղը Հ. Զարարիա վ. Գուրգենեան՝ վենետիկոյ Միհթարեան Սիաբանութենէն, որ եկեր էր Տփղիսէն 1879 Յունի 1ին։ Առ կը հաստատով շուտով թեմական եպիսկոպոսէն. եկեղեցին և վարժատունը շատ խեղճ



Հ. Գաբարիս Վ.՝ Գուրգենեան

1879 - 1886

վիճակի մէջ կը գտնէ, ուստի իր առաջին մտածութիւնը կ'ըլլայ զրամ գտնել: Առ այս 1879 Օգոստոսի 12ին հրաման կ'ուզէ Սիմֆերոպոլի նահանգապետէն որ իր ժողովրդեան մէջ հանգանակութիւն մ'ընէ՝ յօգուտ եկեղեցւոյն և վարժատան: Հրամանը կ'ընդունի Օգոստոսի 24ին և իսկոյն կը հրաւիրէ ժողովրդութիւնը իր տան մէջ, ազդու և համոզիչ յորդոր մը կը խօսի, և ամենուն սիրտը շարժելով՝ ժողովքը կ'որոշէ քահանային ոռճիկը 400 ոռուի, ոռուերէն և հայերէն լեզուաց վարժապետներու համար 600 ո. Օրիորդաց վարժուհւոյ համար 200 ո. նստարաններու և այլ կահ կարասեաց համար 100 ո. փայտի, նորոգութեանց և ծառայի համար 150 ո. զրբի, թղթի և զրչի համար 50 ո. ընդ ամէնը 1500 ո: Այս որոշմանս իսկոյն կը ստորագրէն խաչերես Աղա Զրախեան 300 ո. Յովհաննէս Աղա Ծիկոյեան 100 ո. Յարութիւն Ուզունեան 100 ո. Աւետիք Ծիկոյեան 60 ո. Մկրտիչ Նալպանդեան 50 ո. Յովհաննէս Ուզունեան 50 ո. Ներսէս Ներսէսիան 50 ո. Խաչատուր Ծիկոյեան 50 ո. Յովհաննէս Նալպանդեան 50 ո. Աւետիք Ժամկոչով 50 ո. Ղազարոս Լաշինեան 40 ո. և ուրիշներ ալ ժողովուրդէն կը լրացնեն որոշուած զումարը և կը խոստանան ամէն տարի տալու: Այս յաջողութենէն ետքը՝ կը մտածէ մշտական աղբիւր մը գտնել՝ որպէս զի ժողովրդեան բեոր թեթևցնէ. ասոր համար խնդիր կու տայ Ելեմտից Նախարարին ու հրաման կ'ուզէ եկեղեցւոյ և վարժատան օգտին համար խանութ մը բանալու եկեղեցւոյն մօտ, ուր կարենան մոմ ծախել, և երկրորդ կը խնդրէ որ տէրութենէն ոռճիկ տրուի Սիմֆերոպոլի հայ կաթողիկէ ժողովրդապետին՝ ինչպէս որ լատին ժողովրդապետները կ'ընդունին: Բայց 1880 Ապրիլի 8ին, բացասական պատասխան կու գայ այս ըրած խնդիրին:

1880 Հոկտեմբերի մէջ խնդիր կու տայ քաղաքային Ուպրավայի որ օգնութիւն ընէ Սիմֆեռոպոլի հայ կաթողիկէ վարժատան, ինչպէս նաև Փոխադարձ-Վարկի ընկերութեան, և կ'ընդունի մէկէն 150 ռ. և միւսէն 160 ռ. որ մինչև այսօր կը շարունակուի տարուէ տարի:

Վարժատունը կը բանայ 1881 ամին, 18 մանչ աշակերտներով և 20 աղջիկներով։ Հայերէն լեզուն և կրօնագիտութիւնը ինը կը սովորեցնէ, իսկ ոռու սերէնն և թուարանութիւնը Պ. Յակոբ Պետրիզեան, բայց սա շուտով կը փոխուի և իրեն կը փոխանակէ Շէնէր վարժապետը. կը հրաւիրէ Պ. Խաչատուր Խանպէկեան, վենետիկոյ Միսիթարեան աշակերտը՝ հայերէն լեզուի և երգեցողութեան դասատու, ձեռագործի համար Աննա Պետրիզեան, իսկ Հ. Զաքարիա Կրօնուսոյց կը մնայ, որով վարժարանը կ'ունենայ մեծ յառաջադիմութիւն։

Մինչև Հ. Զաքարիա վարդապետ՝ եկեղեցւոյս բարերարաց գերեզմանը կ'օրհնուէր Նոր - Կիրակիի օրը, իսկ 1881ին կը սկսի աւելի հանդիսով Մայիսի առաջին կիրակին օրհնուիլ յետ ձայնաւոր պատարագի. և այս հանդիսաւոր օրհնութիւնը կը կնքուէր Պ. Խ. Խանպէկեանի շարադրած քառաձայն «Բոլորախումբ» երգով, զոր աշակերտները կ'երգէին ներդաշնակ եղանակով։ Այս հանդէսը մինչև հիմայ կը շարունակուի։


1882 Յուլիսի մէջ կը մտածէ Հ. Զաքարիա վ. Գուրգենեան երէցիոխանաց հետ՝ արուեստանոց մը բանալ տղայոց համար. ուստի նախ գնահատել կու տայ եկեղեցւոյ բակին մէջ եղած շէնքերն ու պարտէզը. կ'արժեցնեն 14,000 ռուբլի և կը խոստանան 500 ռ. տալ արուեստանոցի համար։ Խնդիր կու տայ Սարատովի կոնսիստորիային, բայց սա

1880 Հոկտեմբերի մէջ խնդիր կու տայ քաղաքային Ռւպրավայի որ օգնութիւն ընէ Սիմֆերոպոլի հայ կաթողիկէ վարժատան, ինչպէս նաև Փոխարձ-Վարդկի ընկերութեան, և կ'ընդունի մէկէն 150 ռ. և միւսէն 160 ռ. որ մինչև այսօր կը շրունակուի տարուէ տարի:

Վարժատունը կը բանայ 1881 ամին, 18 մանէ աշակերտներով և 25 աղջիկներով։ Հայերէն լեզուն և կրօնագիտութիւնը ինքը կը սովորեցնէ, իսկ ոռուերէնն և թուարանութիւնը Պ. Յակոբ Պետրիզեան, բայց սա շուտով կը փոխուի և իրեն կը փոխանակէ ԵՀՆէր վարժապետը. կը հրաւիրէ Պ. Խաչատուր Խանդէկեան, վենետիկոյ Միկիթարեան աշակերտը՝ հայերէն լեզուի և երգեցողութեան դասատու, ձեռագործի համար Աննա Պետրիզեան, իսկ Հ. Զաքարիա Կրօնուառոյց կը մնայ, որով վարժարանը կ'ունենայ մեծ յառաջադիմութիւն։

Մինչև Հ. Զաքարիա վարդապետ՝ եկեղեցւոյս բարերարաց գերեզմանը կ'օրէնուէր Նոր - կիրակիի օրը, իսկ 1881ին կը սկսի աւելի հանդիսով Մայիսի առաջին կիրակին օրէնուիլ՝ յետ ձայնաւոր պատարագի. և այս հանդիսաւոր օրէնութիւնը կը կնքուէր Պ. Խ. Խանդէկեանի շարադրած քառաձայն «Բոլորախումը» երգով, զոր աշակերտները կ'երգէին ներդաշնակ եղանակով։ Այս հանդէսը մինչև հիմայ կը շարունակուի։

1882 Յուլիսի մէջ կը մտածէ Հ. Զաքարիա վ. Գուրգենեան երէցփոխանաց հետ՝ արուեստանոց մը բանալ տղայոց համար. ուստի նախ գնահատել կու տայ եկեղեցւոյ բակին մէջ եղած շինքերն ու պարտէզը. կ'արժեցնեն 14,000 ռուբլի և կը խոստանան 500 ռ. տալ արուեստանոցի համար։ Խնդիր կու տայ Սարատովի Լոնսիստորիային, բայց սա



Հ. Նիկողայոս վ. Զիգի  
1887 – ց1890

շատ դժուարութիւններ հանելով, չի յաջողիր իրեն այս խորհուրդը։ Ապա կ'աշխատի Դուռեամսկի փողի վրայ փուռ մը և խանութ մը շինել տալու, որուն յաջողելովը՝ եկեղեցւոյ եկամուտն հետզհետէ կ'աւելնայ:

1883ին Եկեղեցւոյ թէ՛ ներսը և թէ՛ դուրսը նուրոգութիւններ ընել տուաւ և մասնաւրապէս հկեցեցւոյ տանիքը, իրեն աջքազուկ ունենալով Յովհաննէս Աղա Ծիկոյեան։ Ինքն Հ. Զաքարիա վ. պայծառացուց եկեղեցին գեղեցիկ երաժշտութեամբ և երգեցողութեամբ, օգնականութեամբ Պ. Խաչատուր Խանպէկեանի, որ օրէ օր բարեփոխեց հին եղանակները, յարմարցնելով եւրոպական երգերը մեր ծէսներուն և արարողութեանց, ու աշխատեցաւ աւելի գրաւիչ ընել հայկական եղանակները։

Հ. Զաքարիա վարդապետի ջանքով և յորդորմամբ՝ Յակոբ Աղա Գուրգենեան կ'ընծայէ Եկեղեցւոյն սկիհ մը, երկու ոսկէզօծ կանթեղներ և փառաւոր ջահ մը. այսպէս նաև Անաստասիա Խառամըոցայեան կ'ընծայէ ջրօրհնեաց արծաթէ աղաւնին, Ամելիա Ծիկոյեան երկու խաչվառներ, Խաչերես Աղա Ջրախեան՝ վեց մեծ աշտանակներ և վեց միջակ՝ Աւագ խորանի համար, յիշատակ իրեն 25 մեայ պատկին։ Գէորգ Ջրախեան կ'ընծայէ Ս. Անտոնիայ պատկերը և 12 մանր տղայոց համար մետաքսէ շապիկներ, Խաչատուր Խանպէկեան կ'ընծայէ արծաթէ իննկաման մը։

1886 Հոկտեմբերի մէջ Հ. Զաքարիա վ. Գուրգենեան հրաժարելով ժողովրդապետութենէ՝ կ'երթայ կովկաս։ Ժողովուրդը կը մնայ երբեմն անհովիւ. Հ. Անտոն վ., Պետանեան կու գար Խարասուէն քահանայական պաշտօնը կատարելու։ Ուստի ժողովուրդը կը հաւաքուի և կ'որոշեն զրել աղերսագիր մը վե-

նետիկ՝ գերպ . իգնատիոս կիւրեղեան , Միմիթա-  
րեանց ընդհանրական Աբրային որ արժանաւոր քա-  
հանայ մը զրկէ իրենց : Նենետկոյ Միմիթարեան  
Միաբանութիւնը կ'որոշէ Հ. Նիկողայոս վ. . Զիգի,  
որ շուտով ճամբայ կ'ելլէ դէպ ի Սիմֆերոպոլ , և  
հասնելով Սիւաստոպոլ 1887 Յունուարի 24ին , կը  
տեսնէ իրեն ընդառաջ եկած Սիմֆերոպոլի հայ կա-  
թոլիկ ժողովրդեան ներկայացուցիչները՝ Սիրովէ  
Ռւզունեան , Առաքել Նալպանդեան , Մարտիրոս Շա-  
հիպեան , Իգնատիոս Տիւկիւմեան և Խաչատրուր Խան-  
պէկեան , որոնց բարի գալուստ մաղթելով՝ կ'ընդու-  
նին և կ'առաջնորդեն դէպ ի կայարան և անկից  
ալ Սիմֆերոպոլ : Հ. Նիկողայոս վ. . Զիգի շուտով  
կը ծանօթանայ բոլոր ժողովրդեան հետ , կը սկսի  
կանոնաւոր ժողովներ գումարել և արձանագրել ժո-  
ղովոց որոշումները : Իր զիմաւոր ուշադրութիւնը  
նախ վարժատան վրայ կը դարձնէ , նորոգել կու-  
տայ զայն , կը մեծցնէ և ապակիէ երկայն սրահ մը  
աւելցնել կու տայ՝ տղայոց հանգստեան համար : Կը  
ժողովէ 45 աշակերտներ . կը ինդրէ Անաստասիա  
Մըռզայեանն իրբե վարժուհի , որ ձրի կը ծառայէ  
շատ տարիներ , կը վարձէ ոռու վարժապետ մը .  
Խաչատրուր Խանպէկեան հայերէն լեզուի և երգեցո-  
ղութեան դասերը կը շարունակէ և ինքն ալ կրօ-  
նազիտութիւնը : Վարժատունը կարգի կանոնի մըտ-  
նելէն վերջը , կը սկսի նորոգել եկեղեցին . երգեհոնի  
տեղը կը ցածցնէ , կ'աշխատի երգեցողութիւնն ա-  
խորժելի ընել՝ մասնակցութեամբ Խաչատրուր Խան-  
պէկեանի , Մկրտիչ Ծիկոյեանի և Ներսէսեան օրիոր-  
դաց : Ինքն առաջին անգամ իշնողեան և Զատկի  
խթումները կը կատարէ փառաւոր կերպով , որ և  
մինչև այսօր կը շարունակուին :



Հ. Յովսէփի Ա. Մարգարեան

1891 – 1907

1887 Հոկտեմբերի 9ին՝ Գեր. Խոնասիռս Կիւրեղեան Արհիելիսկոպոս և Բնդէ. Աբբայ Վենետիկոյ Միսիթարեան Միարանութեան՝ ընկերակցութեամբ Հ. Արիստակէս Վ. Դասղանդիլեանի՝ Տրապիզոնէն կու զայ Խրիմի ազգայիններուն այցելութեան՝ նախ թէոդոսիա, ապա Խարասու և յետոյ Ալմֆերոպոլ։ Ամէն տեղ մեծ և սիրալիր ընդունելութիւն կ'ըլլայ. ժողովուրդը կարգէ դուրս սիրոյ ցոյցեր կ'ընէ. Կը հիանայ Արհիելիսկոպոսին ձայնաւոր պատարագներուն վրայ, ինչպէս նաև հիանալի քառաձայն երգեցողութեան վրայ, արդիւնք Խաչատուր Խանպէկեանի. շաբաթ մը հիւր կ'ըլլայ Խաչերես Աղա Զրախնեանի և բոլոր ժողովրդեան, ապա կը մեկնի բազմաթիւ ուղեկիցներու և Միսիթարեան վարդապետներուն հետ գէպ ի Սեւաստոպոլ, ուր մասնաւոր ուշադրութեամբ և պատուով կ'ընդունի Գերապայծառ հիւրը՝ Գրիգոր Աղա Տեհորիկ. իսկ յաջորդօրը կը մեկնի նա կ. Պոլիս։

1888 ին Հ. Նիկողայոս Վ. Ջեղի կը մտածէ շինել տալ առաջնորդարան մը աւելի վայելուչ և յարմար ժողովրդապետի համար. բայց չկար պէտք եղած դրամը։ Դիմեց սակայն Խաչերես Աղա Զրախնեանի, որ յանձնառու եղաւ զործին զլուխը կենալու, և մինչդեռ շէնքի նիւթ և ատաղձ կը պատրաստուէր, Հ. Նիկողայոս Վ. Ջեղի՝ հանգանակութեան տետրակը ձեռքը՝ կը շրջի տնէ տուն և կը ժողովէ Ալմֆերոպոլի մէջ 2500 ռ. Խարասուէն 700 ռ. Պօղոս Գուրգենեան կը զրկէ Տփղիսէն 200 ռ. և Վենետիկոյ Միսիթարեան Միարանութեան 1000 ֆրանգ. և ապա Խաչերես Աղա Զրախնեան 1000 ռ. ստորագրելէն վերջը, զարձեալ կու տայ նաև 1300 սուրլի։ Այս հանգանակութեամբ կը կանգնեն փառաւոր միայարկանի տուն մը, չորս սենեակներով,

որուն օրհնութեան հանդէսը կատարուեցաւ 1889  
Յունուարի 25 ին, ուրախութիւն պատճառելով բո-  
լոր ժողովրդեան :

1890 ին կը շինուի երկու միայարկանի խանութ-  
ներ՝ եկեղեցւոյն աջակողմը, արգիւնքով Ռափայէլ  
Աղա Ժամկոչեանի, Գէորգ Աղա Սերեպյակովի,  
Յովհաննէս Աղա Ծիկոյեանի և Թիւթիւննեան եղ-  
բարց: Հ. Նիկողայոս վ. Ջիզի՝ Աւարիոյ տէրու-  
թեան հպատակ ըլլալով՝ չկարողացաւ ընդունիլ  
ուսւահպատակութիւնը, ուստի շատ դժուարութեանց  
կը պատահէր, ասոր համար որոշեց թողուլ Ոիմֆե-  
րոպոլ. հրաժարեցաւ ժողովրդապետութենէն և զը-  
նաց վենետիկ, Մայիսի 27 ին: Իրեն ժամանակը  
կատարինէ Զբախեան կ'ընծայէ արծաթէ ոսկէզօծ  
ձեռքի խաչ մը՝ շինուած կ. Պոլիս, երկու մեծ և  
գեղեցիկ աշտանակներ Աւագ խորանին առջև դր-  
բուած, որոնք Մարտէյլէն բերուեցան Հ. Համազասպ  
վ. Ասփարեանի ձեռքով:

Հ. Նիկողայոս վ. Ջիզիին մեկնելն վերջը՝ առ-  
ժամանակեայ Հ. Քերովք վ. Քուշներեան իւրի  
Աւագ քահանայ Տաւրիոյ, կու զայ Ոիմֆերոպոլ և  
խորհուրդ կ'ընէ ժողովրդեան հետ քահանայի հա-  
մար: Կ'որոշեն զրել վենետիկ Մխիթարեան Միա-  
բանութեան՝ խնդրելով որ նշանակէ յարմար անձ  
մը իրենց առաջնորդ: Մինչև որոշում ժողովրդա-  
պետի՝ Խարասուէն կու զար Հ. Անտոն վ. Պետա-  
նեան և կը հովուէր ժողովուրդը: Ոիմֆէրիոլի  
հայկաթողիկէ ժողովրդեան խնդրազրին պատասխան՝  
Գեղակ ։ Խգնատիոս արհիեպիսկոպոսն կը զրէ Հ.  
Քերովք վ. Քուշներեանի որ նոյն ժամանակ Խրիմի  
մէջ զանուող վարդապետներէն միջէն որոշեն մէկը:  
Այս որոշման վրայ՝ Հ. Քերովք վ. կու զայ Ոիմ-  
ֆերոպոլ, ժողով կը զումարէ կու տայ և ընտրել Հ.

Յովսէփի Վ. Մարգարեանը՝ որ անպաշտօն կը մնար թէոգոսիա:

Աա գալով Սիմֆերոպոլ՝ ժողովրդեան կ'առաջարկէ դիմել թեմական եպիսկոպոսին՝ Անտոն Յէլրի, որպէս զի ընդունի զինքը իր թեմին մէջ: Ժողովուրդը կ'որոշէ որ ինքն ու Պ. Առաքել Նալպանդեան երթան Սարաթով եպիսկոպոսին և անկից Պետերբուրգ, որպէս զի տէրութենէն և եպիսկոպոսէն ընդունելութիւնն և հաստատութիւնը շուտով գործադրուի:

1891 Փետրուարի 4 ին կ'ընդունի հաստատութիւնը, և ահա այս թուականէս կը սկսի Հ. Յովսէփի Վ. Մարգարեան իր գործունէութիւնը: Եւ նախ կը նորոգէ եկեղեցւոյ սպասները, մասնաւորապէս հայկական սրբազն զգեստները կը մտցնէ՝ փոխանակ լատինաձէս զգեստներու, աջբազուկ ունենալով երիտասարդ գաղղիացի Պ. Ֆրանսուա Փարի, սիրող արեւելեան ծէսերուն և հայկական արարողութեանց: 1891 Յունիսի 6 ին հաստատել կու տայ Անտոն Յէլր եպիսկոպոսէն՝ եկեղեցւոյ նոր ընտրուած երէց փոխանները՝ Ուսիայէլ Աղա Ժամկոչեան, Պ. Գրիգոր Ծիկոյեան, Յովհաննէս Աղա Նալպանդեան՝ վարժատան վերակացու և Մարտիրոս Շահիպեան՝ աղքատաց գանձապահ: Ասոնց ժամանակ եկեղեցւոյ եկամուտն ըստ բաւականի կը շատնայ + ուստի 1893 ին մեծ նորոգութիւն կը կատարեն եկեղեցւոյն: Հ. Յովսէփի վարդապետի յորդորմամբ՝ Աննա Թիւթիւննեան՝ դուստր Սարգիս Աղա Նալպանդեանի՝ կ'ընծայէ 3000 ո+ և շինել կու տայ մարմարիոնէ աւագ խորանը, որուն օրհնութեան հանդէսը երեք քահանաներով կը կատարէ Մայլիսի 7 ին: Ապա կը յորդորէ Խաչերես Աղա Զրախեանը՝ որ Աւագ խորանի Յիսուս Փրկիչ պատկերը մարմարիոն շրջա-




Հ. Կիւրեղ Վ. Եղոյեան

1907 - 1908

Նակի մէջ դնէ, որուն շինուելով՝ Աւագ խորանը կը շքեղանայ: 1894ին հաստատել կու տայ, նոր երեցիոխանաց ընտրութիւնը. կ'ընտրուին Ռափայէլ Աղա Ժամկոչեան և Գրիգոր Թիւթիւնձեան, իսկ Վարժատան վերակացու կ'ըլլայ Ֆրանց Շնայդէր և Խաչատուր Կարամուրզա աղքատաց Գանձապահ: Ասոնք ժողովրդապետին հետ մեծ ուշազրութիւն կը դարձնեն վարժատան վրայ, աշակերտներու թիւը կը հասնի մինչեւ 40, կ'ընտրուին նաև վարժուհիներն Անաստափիա և Կատարինէ Մըռզայեան՝ երկու բոյրեր որոնք տասն և հինգ տարիներ օրինակելի անձնանութիւնամբ աշխատած են, և ապա Մարիամ Մըռզայեան նոյնպէս ձրի ծառայած է քանի մը տարի: իսկ թոշակաւոր էին Օրիորդ Թարուսեան, Յուստիանէ Ներսէսեան և Խաչատուր Խանովէկեան: Վերոյիշեալ Վարդապետը մասնաւորապէս ջանացած է տղայոց և օրիորդաց բարձրագոյն ուսումն տալու և միջոց գտնելու զանոնք կամ զիմնազիաներ զետեղելու և կամ արտասահման զրկելու: Մասնաւորապէս Խորհրդով Հ. Յովսէփի վարդապետին և երեցիոխանաց՝ 1899 ին փուուր և քովի խանութը կը նորոգուի և կը վերածուի ընդարձակ խանութներու. այս ժամանակս կը շինուի նաև եկեղեցոյն բակն մէջ ժամկոչի համար յատուկ տունը: 1890 էն սկսեալ ամէն տարի փառաւոր երեկոյթներ կու տար՝ Աիմֆերոսովի հայ կաթողիկէ աղքատաց և վարժատան օգտին, որով թէ նիւթական նպաստ կ'արդիւնանար և թէ բարոյական:

1907 Մայիս 22ին հաստատուեցաւ հայ կաթողիկէ բարեգործական ընկերութիւնը, որուն հիմնացիր եղան Հ. Յովսէփ Վ. Մարգարեան, Խաչերես և Կատարինէ Զրախնան, Ֆրանց Շնայդէր, Մելքոն Մըռզայեան, իգնատիոս Նեմցէսեան,



Հ. Գիոնեսիոս Վ. Գաղատասեան

1908 – 1910

Ուափայէլ Ժամկոչեան, Մանուէլ Մըռզայեան, Գէորգ  
և Յովհաննէս Քէշիեան և Յովհաննէս Ծիկոյեան:  
Այս օգտակար գործը՝ ժողովրդեան յառաջադիմու-  
թեան և զարգացման մեծապէս նորաստեց: Տասն և  
եօթն տարուան ընթացքի մէջ՝ Հ. Յովսէփ վարդա-  
պէտ՝ իր ջանքով և յորդորմամբ՝ շինել կու տայ  
ժողովրդեան եկեղեցւոյն բազմաթիւ գեղեցիկ սպաս-  
ներ, զարդեր, անօթներ, պատկերներ, գորգեր, լա-  
թեղիններ, բարձեր. և այս յիշուածներէն զատ  
ֆրանց Շնայդէր կ'ընծայէ նոր արմոնիում, Պետրոս  
Նեմցէեան Լուստի Ա. Կուսին արձանը, որուն հա-  
մար առանձին խորան մը կը շինէ, և այլն:

1907 ին Հ. Յովսէփ վարդապէտ կը հրաժարի  
ժողովրդապետութենէ, թողլով Սիմֆերոպոլի Հայ  
կաթողիկէ եկեղեցին իր վայելչութեան և փառաւո-  
րութեան մէջ, և կ'երթայ Թիֆլիսի իբրև առաջնորդ  
տեղւոյն Հայ կաթողիկէից համար, ուսկից տարիէ  
մը վերջը կը հրաւիրուի Վենետիկ Միսիթարեան  
Միարանութենէն՝ կարևորագոյն պաշտօնով մը:

1907 Յուլիսի 26 ին Կեսլէր եպիսկոպոսը կը  
նշանակէ առժամանակեայ կառավարիչ եկեղեցւոյն  
Հ. Կիւրեղ Վ. Եղոյեան, որ Խարասու կը գտնուէր:  
Աս Սիմֆերոպոլ զալով՝ սկսաւ իր պաշտօնը ամե-  
նայն եռանդեամբ վարել. բայց աշխոյժ և տաքուկ  
քարոզներով փոխանակ ժողովրդեան սիրտը շահելու՝  
անախորժելի եղաւ, ուստի ժողովուրզը դիմեց Կես-  
լէր եպիսկոպոսին՝ խնդրելով որ իրենց առաջնորդ  
կարգէ Հ. Դիոնիսիոս Վ. Գաղատոսեանը փոխանակ  
Հ. Կիւրեղ վարդապէտին: Եպիսկոպոսը ժողովրդեան  
խնդիրը կը կատարէ, Հ. Կիւրեղ Վ. Եղոյեան փո-  
խազրելով Եկատարինողար, ուսկից կը փոխազրէ  
Հ. Դիոնիսիոս Վ. Գաղատոսեանը Սիմֆերոպոլ, որ  
կը հաստատուի նա 1908 Յունուարի 15 ին:

Երկոյեանի և Պետրոս Շահիպեանի: Վերջինս իւր տասնամեայ արդիւնաւոր երէցփոխանութեան համար ստացաւ Ալմֆերոպոլի հայ կաթողիկէ ժողովրդեան ինդիրըով՝ անձնական պատուաշոր-բաղարացիուրեան պատիւր:

Նոր շէնքի համար ծախսուեցան 11,500 ռուբլի. բակին մէջ շինուեցան նոր սենեակներ, ինչպէս նաև փողոցի ճեմելիքը եկեղեցւոյ երկայնութեամբ տափալւով ծածկուեցաւ: 1912ին թէ՛ բահանայի նոր տունը, թէ՛ եկեղեցին և թէ՛ վարժատունը ելեկտրական լոյս զրուեցաւ: Քանի մ'անգամ ընդհանուր ժողովներ եղան առաջիկայ 50ամեայ յորեւեանը տօնեւլու համար, որոշուեցաւ նորոգութիւններ ընել եկեղեցւոյ մէջ: 1913ին Յունուարի մէջ յանձնուեցաւ շինելու եկեղեցւոյ մեծ դրները, ինչպէս նաև եկեղեցին իւղաներկ զարդարելու զործը: Փետրուարի 2ին որոշուեցաւ եկեղեցւոյ պարտիզին մէջէն՝ փոխազրել եկեղեցին կանգնող Սարգիս և Սոփիա Նալպանդեանի ոսկերքը եկեղեցւոյն մէջ:

Որչափ որ ժողովրդապետներն զլուխ են եկեղեցւոյն թէ՛ ներքին և թէ՛ արտաքին զանազան զործոց մէջ, սակայն առանց երէցփոխաններուն՝ կրնամըսել թէ անկարելի է լաւ կառավարել. ուստի որչափ ալ արդիւնք և աշխատութիւն ունենան ժողովրդապետները, սակայն անուրանալի է երէցփոխաններու եռանդն ու փորձառութիւնը բաղաքական և տնտեսական գործերու մէջ, ինչպէս յայտնի կը տեսնուի Ալմֆերոպոլի հայ կաթողիկէ եկեղեցւոյ շինութենէն մինչև հիմայ:

Եկեղեցւոյս առաջին երէցփոխանները կ'ըլլան՝ յամի 1863ին՝ Պետրոս Շահիպեան և Խաչատուր Աւգունեան, որոնք շատ աշխատել են թէ՛ եկեղեցւոյ շինութեան ժամանակ և թէ՛ յետ օծման, և

ասոնք կը մնան իրենց պաշտօնին մէջ մինչեւ 1865 թուականը: Ասոնց ժամանակը Ալմֆերոպոլի քաղաքային վարչութիւնը կ'իմացնէ ժողովրդապետին և երէցփոխաններուն որ այլ ևս Ռուսաց գերեզմանը թաղել արգիլուած է, և կու տան առանձին տեղ մը հայ կաթողիկէից համար՝ Լեհաց մօտ: Մի և նոյն տարւոյն մէջ ժողովուրդը կը հաւաքուի Հ. Ալմոն վարդապետի տունը, եկեղեցւոյ հաշիները կը նայուին ու նոր երէցփոխաններ կ'ընտրուին՝ Ներսէս Ներսէսեան և Խաչատուր Աւգունեան, որոնք կը ջանան եկեղեցւոյն պակաս բաները լրացնել և հետզետէ զարդարել Աստուծոյ տունը: 1867ին վերոյիշեալ երէցփոխանները հաշիւ տալով ժողովրդամարին՝ կը հրաժարին, և կ'ընտրեն Գէորգ Զրախեան և Յովհաննէս Նալպանդեան, բայց բիշ ժամանակէն Գէորգ Զրախեան կը հրաժարի երէցփոխանութիւնէ և կ'ընտրեն իրեն տեղ Ստեփան Լոմով, որոնք Նալպանդեան ժամանակաց գէմ զատը կը շարունակեն: 1871ին երէցփոխանութեան պաշտօնը կ'ընդունին Գաղարոս Լաշինեան և Աւետիք Ծիկոյեան, որոնք եկեղեցւոյն տանիքը ներկել կու տան, եկեղեցւոյն զիմացը սալայտակ կը շինեն և պատարազի զգեստները նորոգել կու տան: 1875ին ժողովուրդը կ'ընտրէ Խաչատուր Ծիկոյեան և Առաքել Նալպանդեան երէցփոխանները, որոնց ժամանակ Աւագ Ուրբաթի Քրիստոսի թաղման սրբավայրը կը շինուի և եկեղեցւոյ ապակիէ երկրորդ դրները: 1878ին կ'ընտրուին Յովհաննէս Ծիկոյեան և Սարգիս Նալպանդեան երէցփոխանները, վերջինս կը հրաժարի, և իրեն տեղ կ'ընտրեն Մկրտիչ Նալպանդեան: Ասոնք շատ մեծ եռանդեամբ կ'աշխատին, մանաւանդնոր ժողովրդապետին իրավուուանօք, փուռ և խանութ մը կը շինեն Դուրեանսկի փողոցի վրայ, կ'ըն-

դունին մշտնջենաւոր պատարագուցներ, ու կարգի կը գնեն վարժատունը. ուստի երեք տարիէն վերջը՝ չնորհակալութիւն կը յայտնէ ժողովուրդը երէցփոխաններուն՝ իրենց արդինաւոր ծառայութեան համար, և դարձեալ կ'ընտրէ Յովհաննէս Աղա Ծիկոյեան, օգնական տալով Գրիգոր Թիւթիւնճեան, որոնց կը մնան մինչև 1866 թուականը, Ասոնց կը փոխանակեն Ռափայէլ Աղա Ժամկոչեան և Պ. Գրիգոր Ծիկոյեան, որոնք կը ջանան եկամուտները շատցնել, եկեղեցւոյ և վարժատան վրայ մեծ նորոգութիւններ կ'ընեն, ժողովրդապետի նոր տուն մը կը շինեն փողոցի վրայ և կը կանգնեն եկեղեցւոյ աշակողմը միայարկանի երկու խանութներ : 1891 ին ժողովուրդը չնորհակալութիւն յայտնելով երէցփոխաններուն՝ իրենց անձնանուէր աշխատութեանց համար, դարձեալ կ'ընտրէ զիրենք և կը խնդրէ որ երեք տարի ևս շարունակեն : 1894 ին յանձն կ'առնու Ռափայէլ Աղա Ժամկոչեան մնալ իր պաշտօնին մէջ, և կ'ընտրուին իրեն իրոք օգնական Գրիգոր Թիւթիւնճեան, Խաչատուր Լարամուրզա և Մարտիրոս Շահիպեան, յորոնց մէկը վարժատան վերակացու էր և վերջինը աղբատաց գանձապահ : Ռափայէլ Ժամկոչեան այս ժամանակս իր ջանքով Խաչերես Աղա Զրախեանէ կ'առնու 300 ոռորդի, Ֆրանց Շնայդերէն 200 ոռորդի . Մարգիս Նալպանդեանէ 100 ռ. և ինքն ալ 200 ոռորդի տալով շինել կու տայ եկեղեցւոյն նոր երկաթէ ծածքը, որ բոլորովին վնասուեր էր : 1897 ին կ'ընտրուին երէցփոխաններ Մանուէլ Մըոզայեան, Ֆրանց Շնայդեր, Անգիս Ներսէսեան և Յովհակիմ Ծիկոյեան : Ասոնց ատեն Պ. Մկրտիչ Ծիկոյեան յանձն կ'առնու Գերեզմաննոցը կարգի կանոնի բերել ու վայելչացնել . ուստի սա մեծ եռանդով կ'աշխատի, պահապան մը

կը վարձէ, որուն համար՝ ի յիշատակ իր մօր Եղիսարէթի՝ տուն մը կը շինէ 500 ոռորդի ծախքով : 1901 ին դարձեալ կ'ընտրուին վերոյիշեալները, և միայն փոխանակ Յովհակիմ Ծիկոյեանի՝ կ'ընտրուի Պետրոս Շահիպեան : Ասոնց ժամանակը շատ փառաւոր զգեսաններ շինել կու տայ Հ. Մարգարեան . 1907 ին՝ Եկեղեցւոյ և վարժատան հաշինները կը յանձնեն նորընտիր երէցփոխաններուն՝ Մանուէլ Ներսէսեանի, Պ. Գէորգ Քէչիեանի, Պ. Յովհէփ Ծիկոյեանի և Պ. Պետրոս Շահիպեանի, որոնց չորս տարի արդինաւոր աշխատութենէ վերջը, 1912 ին չնորհակալութիւն կ'ընդունին ժողովրդենէն և դարձեալ կ'ընտրուին :



Սիմֆերոպոլի Հայ-կաթողիկէ եկեղեցւոյն ընդհանուր  
եկամուտն և ծախրը:

1864 - 1912

տարի եկամուտ ծախր

1864	440	439	Ժողովրդապետի Հ.	1888	2750	2720
1865	395	358	Սիմֆերոպոլի Հ.	1889	8876	8966
1866	535	453	Ժապեափ առձիկներ	1890	2874	2953
1867	494	654	բաժնչի 1878 ան-	1891	2273	2334
1868	455	255	տուած չեն:	1892	2492	2380
1869	330	395		1893	2961	2849
1870	459	447		1894	4684	3061
1871	396	335		1895	3535	3182
1872	504	592		1896	3224	3907
1873	467	613		1897	4538	3316
1874	518	553		1898	5776	5893
1875	699	631		1899	2702	3062
1876	780	945		1900	2705	4844
1877	844	744		1901	4092	4092
1878	827	907		1902	3484	3779
1879	2272	2255	Այս թուականէն:	1903	3539	3875
1880	2404	1926	Կը սկսի ամրող	1904	3095	3632
1881	2889	2422	ծախրը թէ մոց-	1905	5490	4678
1882	2567	2462	գրրապետի և թէ	1906	4137	4330
1883	2354	2844	գարժապետաց և թէ	1907	5238	5198
1884	3103	2822	Եկեղեցւոյն:	1908	4650	4336
1885	3410	3153		1909	5480	4790
1886	2736	2503		1910	4257	4416
1887	2594	2898		1911	16,070	16,061
				1912	5382	5359

Սիմֆերոպոլի Հայ-կաթողիկէ եկեղեցւոյ ժողովրդեան,  
աշակերտաց, միրտութեան պատկի և թաղման  
թուահամարը:

1863 - 1912

տար ժող աշակ մկրտ պատկ մահ տար ժող աշակ մկրտ պատկ մահ

1863	13	18	1	10	1888	45	12	4	7
1864	15	12	1	10	1889	36	13	4	11
1865	18	8	1	11	1890	27	8	—	8
1866	14	6	5	3	1891	35	13	3	6
1867	17	13	5	3	1892	36	14	4	15
1868	19	7	—	10	1893	40	12	4	10
1869	16	9	1	16	1894	36	12	4	5
1870	12	5	4	5	1895	43	8	2	7
1871	12	14	3	10	1896	39	16	5	12
1872	14	13	2	7	1897	40	8	6	6
1873	18	13	—	6	1898	38	12	3	5
1874	11	13	1	10	1899	30	8	3	5
1875	—	10	2	10	1900	26	6	—	12
1876	—	11	1	6	1901	22	9	—	8
1877	—	11	1	6	1902	28	7	1	7
1878	—	18	2	11	1903	29	4	2	7
1879	30	15	2	9	1904	29	9	3	15
1880	35	11	5	14	1905	24	7	1	10
1881	43	13	5	10	1906	22	4	4	11
1882	40	13	2	11	1907	24	8	2	9
1883	32	10	1	11	1908	21	10	2	13
1884	30	12	2	10	1909	16	11	3	10
1885	34	13	3	12	1910	14	16	3	6
1886	31	6	1	7	1911	21	15	3	14
1887	35	14	5	4	1912	18	12	4	5

Սլմֆերուպոլի Հայ-կաթողիկէ եկեղեցւոյն ընդհանուր  
եկամուտն և ծախրը:

1864 - 1912

տարի եկամուտ ծախր

1864	440	439	Ժողովրդապետի Հ.	1888	2750	2720
1865	395	358	Արման Վ. ի և զար-	1889	8876	8966
1866	535	453	ժաղկար առձիկնե-	1890	2874	2953
1867	494	654	բ մինչ 1878 ան-	1891	2273	2334
1868	455	255	շուած չեն:	1892	2492	2380
1869	330	395		1893	2961	2849
1870	459	447		1894	4684	3061
1871	396	335		1895	3535	3182
1872	504	592		1896	3224	3907
1873	467	613		1897	4538	3316
1874	518	553		1898	5776	5893
1875	699	631		1899	2702	3062
1876	780	945		1900	2705	4844
1877	844	744		1901	4092	4092
1878	827	907		1902	3484	3779
1879	2272	2255	Այս թուականքո	1903	3539	3875
1880	2404	1926	կ սկսի ամռողջ	1904	3095	3632
1881	2889	2422	ծախրը թէ ճողո-	1905	5490	4678
1882	2567	2462	վրայապետ և թէ	1906	4137	4330
1883	2354	2844	վարժապետ և թէ	1907	5238	5198
1884	3103	2822	Եկեղեցւոյն:	1908	4650	4336
1885	3410	3153		1909	5480	4790
1886	2736	2503		1910	4257	4416
1887	2594	2898		1911	16.070	16.061
				1912	5382	5359

Սլմֆերուպոլի Հայ-կաթողիկէ եկեղեցւոյ ժողովրդեան,  
աշակերտաց, միրտովեան պատկի և թաղման  
թուահամարը:

1863 - 1912

տար ժող. աշակ. մկրտ. պատկ մահ.

1863	13	18	1	10	1888	45	12	4	7
1864	15	12	1	10	1889	36	13	4	11
1865	18	8	1	11	1890	27	8	—	8
1866	14	6	5	3	1891	35	13	3	6
1867	17	18	5	3	1892	36	14	4	15
1868	19	7	—	10	1893	40	12	4	10
1869	16	9	1	16	1894	36	12	4	5
1870	12	5	4	5	1895	43	8	2	7
1871	12	14	3	10	1896	39	16	5	12
1872	14	18	2	7	1897	40	8	6	6
1873	18	13	—	6	1898	38	12	3	5
1874	11	13	1	10	1899	30	8	3	5
1875	—	10	2	10	1900	26	6	—	12
1876	—	11	1	6	1901	22	9	—	8
1877	—	11	1	6	1902	28	7	1	7
1878	—	18	2	11	1903	29	4	2	7
1879	30	15	2	9	1904	29	9	3	15
1880	35	11	5	14	1905	24	7	1	10
1881	43	13	5	10	1906	22	4	4	11
1882	40	13	2	11	1907	24	8	2	9
1883	32	10	1	11	1908	21	10	2	13
1884	30	12	2	10	1909	16	11	3	10
1885	34	13	3	12	1910	14	16	3	6
1886	31	6	1	7	1911	21	15	3	14
1887	35	14	5	4	1912	18	12	4	5



զազդընթակեմոց, մի ժայթի հեջիշիկնաթուկ  
-մուշ զմբուկուցմէ չի դ գլախաղպիքի Ա չի մուղովմտ քանուց  
կոսի, գ զգանգզեասացա ճշր գլախաղպիքի Ա պամու մկանցան  
առաւթ քառակազմուց Շ 191-1980 Կ ճշր զիկանցան սմ' Ա մուշ, Զ

1863	281	1881	507	1898	693	1864	282	1882	513	1899	612	1865	313	1883	512	1900	615	1866	324	1884	513	1900	616	1867	340	1884	514	1901	616	1868	352	1885	516	1902	618	1869	351	1885	520	1903	620	1870	351	1887	530	1904	622	1871	388	1888	550	1905	625	1872	352	1889	557	1906	632	1873	375	1890	565	1907	637	1874	381	1891	572	1908	645	1875	406	1892	575	1909	653	1876	430	1893	577	1910	658	1877	434	1894	584	1911	658	1878	462	1895	590	1912	671	1879	471	1896	594	1912	671
------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----	------	-----

1863-1912

Ակտերանթուած ցողևամիսնար շիվնաքառելու-լուչ վլահոսմղքովը

ՀՀ Ազգային գրադարան



NL0157486

